



**ԱՐԾԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

15 մարտի 2019 թ.

N 164-Ա

ք. Ստեփանակերտ

**ԱՐԾԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ՀԻՊՈՒԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ  
ՋՐԱԶԱՓԱԿԱՆ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման 15-րդ կետը և դեկլարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունն **որոշում է.**

Հաստատել Արցախի Հանրապետության փոքր հիդրոէլեկտրակայանների ջրաչափական մշտադիտարկման կենտրոնացված համակարգի ներդրման միջոցառումների 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:



ԱՐԾԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ

*[Handwritten signature]*

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Հավելված  
Արցախի Հանրապետության  
կառավարության 2019 թվականի  
մարտի 15-ի N 164-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԱՐԾԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ՀԻՊՈՒԼԵԿԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ  
ՋՐԱԶԱՓԱԿԱՆ ՄՇԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՆԵՐԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ**

**I. ԻՐԱԿԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐ**

Ջրային ռեսուրսները կարևորագույն դեր ունեն Արցախի Հանրապետության հիդրոէներգետիկայի զարգացման համար:

Արցախի Հանրապետության տարածքում գործում է 18 փոքր հիդրոէլեկտրակայան (այսուհետ՝ ՓՀԷԿ), կառուցման փուլում է գտնվում 16 ՓՀԷԿ, նաև նախատեսվում է ութ ՓՀԷԿ-երի կառուցում: Գործող ՓՀԷԿ-երի շահագործման հետևանքով գետերի էկոլոգիական հոսքի վրա ճնշումները նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում յուրաքանչյուր ՓՀԷԿ-ի ջրադի կետում առցանց հոսքաչափական սարքավորումների կիրառման, ինչը հնարավորություն կստեղծի ունենալու մի շարք առավելություններ:

1) փաստացի օգտագործված ջրաքանակի օպերատիվ կերպով հավաքագրում, ինչը կհեշտացնի ջրօգտագործողի կողմից վճարվող բնօգտագործման վճարների գործընթացը:

2) ռեժիմային դիտարկումների իրականացման անհրաժեշտության վերացում:

3) ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում:

4) ջրային պաշարների վերականգնում:

5) կոռուպցիոն ռիսկերի նվազեցում՝ ստուգումների իրականացման անհրաժեշտության աստիճանական նվազեցում և հետագայում դրանց բացառում:

6) ջրօգտագործման ծավալների ավտոմատ, առցանց հաշվառում՝ ապահովելով ստույգ տվյալների առկայությունը:

Արցախի Հանրապետության ՓՀԷԿ-երի ջրաչափական մշտադիտարկման կենտրոնացված համակարգի ներդրման միջոցառումների 2019 թվականի ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված աշխատանքները և գործառնությունները կիրականացվեն Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակիցների կողմից՝ ներգրավելով ոլորտի մասնագիտացված կազմակերպություններին: ՓՀԷԿ-երի ջրաչափական մշտադիտարկման կենտրոնացված համակարգի ներդրման համար հասանելի կլինեն տեխնիկական հագեցվածությունն ու մասնագիտական ունակությունները, ինչպես նաև այլ միջոցներ, որոնք նպատակաուղղված են ձեռնարկելու սույն ծրագրի շրջանակներում նախատեսվող բոլոր աշխատանքները:

Ծրագրի իրականացումը համապատասխան մակարդակով ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության մասնագիտացված կազմակերպություններից

խորհրդատվական և ծրագրով նախատեսված աշխատանքներին անմիջական մասնակցություն ցուցաբերելու նպատակներով, կներգրավվեն բարձր որակավորում ունեցող մասնագետներ՝ պայմանագրային հիմունքներով:

## II. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է՝ ազգային ջրային պաշարի պահպանությունը՝ օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով, շրջակա միջավայրի կայունության ապահովումը, ջրային պաշարների կարգավորումը և օգտագործումը, ջրակորուստները կրճատելը, հիդրոէներգետիկայի ոլորտի կանոնակարգումը, ինչպես նաև դրանցից բխող խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

Ծրագրի խնդիրներն են.

- 1) ջրառի և ջրօգտագործման ծավալների ավտոմատ, առցանց հաշվառում՝ ապահովելով ստույգ տվյալների առկայություն.
- 2) հիդրոէներգետիկայի ոլորտում ջրօգտագործման արդյունավետության բարձրացում և ջրի խնայողություն.
- 3) կոռուպցիոն ռիսկերի նվազեցում՝ ստուգումների իրականացման անհրաժեշտության աստիճանական նվազեցում և հետազայում դրանց բացառում:

## III. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի շրջանակներում իրավիճակի ուսումնասիրման նպատակով իրականացվելու են տեղազննման երթուղիներ դեպի ՓՀԷԿ-եր: Ծրագրով նախատեսվում է 50 դիտայց՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի, Շահումյանի, Քաշաթաղի և Հաղորդի շրջանների ուղղությամբ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ներդնել «Locator-SCADA» մշտադիտարկման կենտրոնացված համակարգ (այսուհետ՝ համակարգ), որն իրենից ներկայացնում է էներգետիկ ռեսուրսների հեռուստաչափական տվյալների (ճնշում, հոսք, մակարդակ և այլն) դիտարկման և վերլուծության առցանց բազմաօգտատերային համակարգ, որի միջոցով հնարավոր է.

- 1) տվյալների իրական ժամանակում մշակում, արտացոլում և արխիվացում.
- 2) համակենտրոն տվյալների հենք՝ բոլոր տեսակի տվյալների համար.
- 3) տազնապային ազդանշանների գեներացում և հաղորդում (էլեկտրոնային փոստ և հաղորդագրություն).
- 4) հեռահաղորդակցման տեսակի ընտրություն.
- 5) մարտկոցով և ֆոտովոլտայիկ աղբյուրներով սնուցվող հեռակա տերմինալների առկայություն.
- 6) համակարգի մասշտաբավորում.
- 7) ավտոմատացված գործառույթներ.
- 8) բաց տվյալների բազայի հիմնում այլ համակարգերի հետ համակցման համար.
- 9) GIS տեխնոլոգիաների կիրառություն:

Շեռակա տերմինալներից տվյալներն ավտոմատ կերպով կհաղորդվեն օգտագործողի սերվերին կամ «Locator-SCADA-DHS» (Data Hosting Service) անպային

համակարգ՝ օգտագործողի կողմից սահմանված պարբերականությամբ կամ կախված տազնապային վիճակից:

Համակարգը հանդիսանում է էներգետիկ ռեսուրսների տվյալների հավաքագրման և վերլուծության համալիր լուծում: Այն հնարավորություն կտա տեսնել, թե ինչ է տեղի ունենում դիտարկվող օբյեկտում ներկա պահին, ինչը թույլ կտա օպերատիվ կերպով որոշումներ կայացնել՝ բացառելով վթարային իրավիճակները, ինչպես նաև կանխարգելել կորուստները՝ նվազագույնիև հասցնելով մարդկային միջամտության գործոնը:

Համակարգի տվյալների վերլուծական փաթեթը թույլ կտա ունենալ անսահմանափակ քանակությամբ տեղեկատվական միավորներ մեկ օբյեկտի համար: Համակարգը թույլ չի տա օգտատերերին փոփոխել կամ հեռացնել արխիվացված տվյալները: Ոչ մի տվյալ չի կարող վնասվել օգտատերերի գործողություններից: Այն կապահովի տվյալների հասանելիությունը ներքին ցանցից կամ անպային հեռքից դիտարկիչի միջոցով, որն ազատում է օգտատերերին այլ հատուկ ծրագրերի օգտագործումից և չի կապվում որևէ օպերացիոն համակարգի հետ:

Վերջում կամփոփվեն ստացված դաշտային և գործնական աշխատանքների արդյունքները և կկազմվի ամփոփ հաշվետվություն ծրագրի արդյունքների վերաբերյալ:

## IV. ԱՎՆԿԱՎԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի իրականացումից ակնկալվում է ունենալ ՓՀԷԿ-երի ջրաչափական մշտադիտարկման կենտրոնացված համակարգ, որը հիմք կհանդիսանա վերականգնել տարիներ շարունակ ոչ արդյունավետ, ավանդական ջրօգտագործումից ժառանգած և ընթացիկ գործունեության արդյունքում հյուծված ջրային ռեսուրսները՝ ապահովելով շրջակա միջավայրի պահպանության հետագա կայուն զարգացումը, բնական ռեսուրսների վերականգնման և ողջամիտ օգտագործման պահանջները:

## V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ VI. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ծրագրի իրականացման համար Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից նախատեսվում է հատկացնել 7 899 500 (յոթ միլիոն ութ հարյուր հինսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՐԱԿԱԼ

Ա. ԱԶԱՐՅԱՆ